Պարտուցն ալ վըճար չըլլայ, պարտուցըն գաս դու հաւալայ,
Անճրկի լուք զիս քեզ տայ, ապա քո բանըդ լինենայ:

Ի Զ.

Ժամ ժամ կուգայ ի վերայ, որ ելնեմ կանչեմ՝ Ո՞ւր է նա.
Կէնա երեսիս ջըրէն ես վախեմ թէ մարդ չիմանայ.
Անոր կամ ճատու պէտք է կամ պառաւ որ զայն գիտենայ,
Կամ մորուագալի կտրիճ որ գըլուխն անցած լինենայ:

Ի Է.

Եկո՛ քեզի նուռ մի տամ, կտրէ՛ տե՛ս քանի՞ հատ ունի.
Ամէն հատի պագ մի տուր, աւելին տարամ թէ պիտի:
–Գընա՛, ծօ՛ տըղայ տխմար, ես ըզքեզ խելօք գիտէի:
Ամէն հատի պա՞գ մի տամ, ո՞ւր եղեր կամ ո՞ւր տի լինի:

Ի Ը.

Այս աստընուորիս վըրայ երկու բան ողորմ ու լալի.
Մէկ որ սիրոյ տէր լինի, մէկ մ'ալ գայ Գըրօղն ու տանի.
մեռածըն գէմ չէ լալի, որ ունի զիւր խոցն ալանի:
Եկէք զողորմուկս տեսէք, ո՛չ մեռած է ո՛չ կենդանի:

Ի Թ.

Ա՛յ իմ ըռանա խալաս, որ եկիր ի մեր մահալլաս,
Եկիր ու նոր սէր բերիր, լօք լըցիր կըրակն ի վըրաս:
Երթամ աղաչեմ զԱստուած, երբ եկիր՝ նա ալվի չերթաս,
Ձերեսդ երեսիս դընեմ, որ զեկած ճամբան մոռանաս:

Լ.

Երնեկ ես անոր կուտամ որ առեր զիւր եարն ու փախեր,
Ոնց որ ըզկարմունջն անցեր՝ ջուրն եկար զկարմունջն է տարեր,
Ձընիկ 'ւ եղեմնիկ եկեր՝ զոտուընուն հետն է կորուսեր,
Առեր ու պաղչան մըտեր, ցորեկով դնչիկն է պագեր:

Լ Ա.

Ով որ սիրու տէր լինի 'ւ իր սիրուն ճարակ չիլինի,
Թող երթայ փորէ տապան եւ մտնու մէջըն կենդանի,
Սրտին դէմըն բաց թողու, որ ելնէ բոցըն ծիրանի,
Ով անցնի նա զայն ասէ՝ Սիրու տէր մարդըն կու վառի: